ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 հունվարի 2022 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Հասմիկ Շահբազյանի ընդդեմ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված թիվ 1848 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ստացած 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը Հասմիկ Շահբազյանին վերադարձնելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ՎԴ/13026/05/21 գործով ենթակայության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունվարի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Հասմիկ Շահբազյանի ներկայացուցիչը 2021 թվականի դեկտեմբերի 9-ին հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության, որով պահանջել է պարտավորեցնել պատասխանողին Հասմիկ Շահբազյանին վերադարձնել 2014 թվականի

հոկտեմբերի 6-ին կնքված թիվ 1848 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ստացած 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը:

2. Վարչական դատարանը (դատավոր՝ Ե.Առաքելյան) 2021 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացրել հայցադիմումը վերահասցեագրելու մասին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«Հայցադիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է հայցվորի և հարկադիր կատարողի՝ որպես վաճառողի միջև ծագած պայմանագրային իրավահարաբերություններին, որտեղ պայմանագրի կողմեր են հանդիսանում մի կողմից աճուրդում հաղթած մասնակից հայցվորը՝ որպես գնորդ, և մյուս կողմից հարկադիր կատարողը՝ որպես վաճառող, որը տվյալ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում հանդես է գալիս պետության անունից:*

(…)

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանը գտնում է, որ սույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված հայցը բխում է քաղաքացիաիրավական՝ պայմանագրային իրավահարաբերություններից, քանի որ հայցվորը խնդրում է վերադարձնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ կնքված պայմանագրով ստացած 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը, որպիսի պարագայում կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ամրագրված ընդհանուր կանոնները:

Այսպիսով, հայցվոր Համիկ Հակոբի Շահբազյանի և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև ծագած իրավահարաբերությունը չի բխում հանրային իրավահարաբերություններից, այն չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ, ուստի ներկայացված պահանջը ՀՀ վարչական դատարանին ընդդատյա լինել չի կարող»:

3. Թիվ ՎԴ/13026/05/21 գործը 2021 թվականի դեկտեմբերի 21-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Վարդանյանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Ա.Վարդանյան) 2022 թվականի հունվարի 5-ի որոշմամբ գործի ենթակայության շուրջ ծագած վեճը լուծելու նպատակով գործն ուղարկել է Վճռաբեկ

դատարանի նախագահին՝ ներկայացնելով հետևյալ պատճառաբանությունը. *«(…) Վարչական դատարանի թիվ ՎԴ/2551/05/16 գործով 2018 թվականի ապրիլի 19-ի վճռի ուսումնասիրությունից ստացվում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է, որ հարկադիր կատարողի որոշումը վարչական ակտ է, իսկ որոշում ընդունելու ամբողջ գործընթացը՝ վարչարարություն:*

(…)

Արդյունքում, ամբողջ վերոգրյալի համադրմամբ բացահայտելով կողմերի իրավահարաբերությունների բովանդակությունը՝ ստացվում է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունը վարչաիրավական է, քանի որ անմիջականորեն ծագում է հարկադիր կատարողի կողմից ընդունված վարչական ակտն անվավեր, իսկ հարկադիր կատարողի ողջ գործողությունները՝ վարչարարությունը, ոչ իրավաչափ ճանաչելու արդյունքում, և հետևաբար, դրանից բխող, դրան հաջորդող՝ պետական մարմնի կողմից գործողությունների կամ անգործության իրավաչափությունը որոշելը, վիճարկումը, պարտավորեցումը, գործողության կատարումը կամ ձեռնպահ մնալը, պետք է քննվեն վարչական դատավարության կարգով, որպիսի պայմաններում սույն հայցը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

5. Թիվ ՎԴ/13026/05/21 գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հունվարի 11-ին:

Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

6. Վարչական դատարանի թիվ ՎԴ/2551/05/16 գործով 2018 թվականի ապրիլի 19-ի վճռով Տիգրան Շահինյանի հայցն ընդդեմ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձինք՝ Հասմիկ Շահբազյանի, Սրբուհի Շահբազյանի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ «Գրավադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 2013 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումն անվավեր ճանաչելու, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ հրապարակային սակարկությունների միջոցով ք.Երևան, Չայկինայի 21 հասցեի գույքն օտարելուն ուղղված

գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք՝ նշված գույքն օտարելուն ուղղված հարկադիր էլեկտրոնային աճուրդը, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Հասմիկ Շահբազյանի միջև 2014 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված թիվ 1848 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կատարված սեփականության իրավունքի գրանցումը, Հասմիկ Շահբազյանի և Սրբուհի Շահբազյանի միջև 2016 թվականի ապրիլի 7-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Սրբուհի Շահբազյանի անվամբ 2016 թվականի ապրիլի 12-ին կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարվել է: Անվավեր է ճանաչվել հարկադիր կատարող Տ.Մալխասյանի՝ ‹‹Գրավադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին›› 2013 թվականի դեկտեմբերի 4-ի որոշումը, որպես որոշման անվավերության հետևանք՝ ոչ իրավաչափ են ճանաչվել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ հրապարակային սակարկությունների միջոցով ք.Երևան, Չայկինայի 21 հասցեի գույքն օտարելուն ուղղված գործողությունները, անվավեր են ճանաչվել ք.Երևան, Չայկինայի 21 հասցեի գույքն օտարելուն ուղղված հարկադիր էլեկտրոնային աճուրդը, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Հասմիկ Շահբազյանի միջև 2014 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված թիվ 1848 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կատարված սեփականության իրավունքի գրանցումը, Հասմիկ Շահբազյանի, Սրբուհի Շահբազյանի միջև 2016 թվականի ապրիլի 7-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը, Սրբուհի Շահբազյանի անվամբ 2016 թվականի ապրիլի 12-ին կատարված սեփականության իրավունքի գրանցումը:

Վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/2551/05/16 գործով 2018 թվականի ապրիլի 19-ի վճիռն օրինական ուժի մեջ է մտել 2021 թվականի մայիսի 12-ին:

7. ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի պետը Հասմիկ Շահբազյանին հասցեագրված 2021 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ Եա6594/02 գրությամբ հայտնել է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն

վարչական շրջանների բաժնում հարուցված թիվ 00030257 և թիվ 00080895 կատարողական վարույթները վերսկսվել են և համապատասխան գրություն է ուղարկվել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերություն՝ հարկադիր կատարողի կողմից գրավադրված՝ Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Չայկովսկու փողոցի թիվ 21 հասցեում գտնվող հողամասի վաճառքից իրենց փոխանցված 4.750.000 ՀՀ դրամ գումարը ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի դեպոզիտ 900018007782 հաշվեհամարին փոխանցելու վերաբերյալ: Միաժամանակ հայտնվել է, որ միջոցներ են ձեռնարկվում Հասմիկ Շահբազյանի կողմից ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը վճարված գումարներն իրեն վերադարձնելու ուղղությամբ: Հայտնվել է նաև, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության կողմից գումարները ստանալուց հետո հարկադիր կատարողի կողմից կկայացվի համապատասխան որոշում, որի վերաբերյալ վերջինս լրացուցիչ կտեղեկացվի: Ինչ վերաբերում է դիմումով ներկայացված այլ ծախսերին, ապա հայտնել է, որ նշված գումարները ենթակա չեն վճարման:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հարկադիր էլեկտրոնային աճուրդի անվավերության հետևանքով անվավեր ճանաչված առուվաճառքի պայմանագրով ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից լուծի վաճառքից ստացված գումարները գնորդին վերադարձնել պարտավորեցնելուն ուղղված գործողությունները ծագում են հանրայի՞ն, թե մասնավոր իրավահարաբերություններից:*

9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության*

ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

10. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի: (...)»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

11. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

12. Սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական

դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերից ծագող գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ օրենսդիրը վարչական դատարանի ընդդատության և առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ենթակայության կանոնների խախտման դեպքում նախատեսել է տարբեր իրավական հետևանքներ:

13. Այսպես՝ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որտեղ ենթակայության կանոնների խախտումը հայցադիմումի ընդունելության փուլում հանգեցնում է հայցադիմումի ընդունումը մերժելուն, վարչական դատավարությունում հայցվորի կողմից ընդդատության կանոնները չպահպանելու հետևանքը հայցադիմումը վերահասցեագրելու՝ վարչական դատարանի լիազորության կիրառումն է: Վերոգրյալ կարգավորումների տարբերությունը պայմանավորված է վարչական արդարադատության առանձնահատկություններով, մասնավորապես՝ վարչական դատավարությունում դատարանի ակտիվ դերակատարմամբ:

Այսպիսով, յուրաքանչյուր դեպքում վարչական դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք կոնկրետ գործն ընդդատյա է (ենթակա է) տվյալ դատարանին, թե՝ ոչ, և նշված հարցի կապակցությամբ բացասական եզրահանգում կատարելու դեպքում պարտավոր է հայցադիմումը վերահասցեագրել ըստ ընդդատության: Նույն իրավիճակում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր է դրա ընդունումը մերժել՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

14. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *«Վեսպ»*

ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ[1]*:*

15. Սույն գործով վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելու համար անհրաժեշտ է վերլուծել հարկադիր էլեկտրոնային աճուրդի անվավերությանը վերաբերող իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը:

16. Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:*

2. Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

17. «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում կնքված առք ու վաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում գնած գույքի նկատմամբ դատարանի վճռի հիման վրա վերականգնվում են պարտապանի սեփականության իրավունքը, իրացման հետևանքով գույքի նկատմամբ դադարած այլ իրավունքները և արգելանքները, իսկ պահանջատերը, հարկադիր կատարողը և պարտապանը լոտի վաճառքից ստացված գումարներն իրենց ստացած չափով վերադարձնում են գնորդին»:*

18. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի դատական կարգով վիճարկման առանձնահատկություններին անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *Դեզդեմոնա, Էդիկ, Գոհար, Ստեփան, Նունե, Հմայակ և Ալիսա Մանուկյանների, Անահիտ Հարությունյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության*

[1] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ վարչական գործով 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ[2]: Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. *«(…) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Ծառայությունը՝ որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու դատական ակտերի հարկադիր կատարումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին, մասնավորապես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, իրականացվում է նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելու միջոցով, այն է՝ սակարկություններով վաճառելու և այն հետագայում իրացնելու միջոցով: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկությունների, որտեղ որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում սակարկությունները կազմակերպվում և անց են կացվում Ծառայության կողմից՝ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթին համապատասխան: (…) տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հարկադիր կատարման վարույթում Ծառայությունը, կատարելով օրենքով սահմանված իր պարտականությունը, կազմակերպել և իրականացրել է բնակարանի հարկադիր էլեկտրոնային աճուրդը, իսկ վեճն առաջացել է Ծառայության կողմից իր հանրային իշխանական այդ լիազորություններն իրականացնելու կապակցությամբ: Հետևաբար կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիական, այլ հանրային իրավահարաբերություններ»:*

[2] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԿԴ3/0174/02/14 որոշումը:

19. Սույն որոշման 16-18-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացն իրենից ներկայացնում է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից իրականացվող վարչարարություն, իսկ որպես դրա անվավերության հետևանք՝ առուվաճառքի պայմանագրի անվավեր ճանաչման դեպքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պարտավորվում է լոտի վաճառքից ստացված գումարները ստացված չափով վերադարձնել գնորդին՝ հիմք ընդունելով «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 3-րդ մասը: Այսինքն՝ հարկադիր կատարողի կողմից լոտի վաճառքից ստացված գումարները ստացված չափով գնորդին վերադարձնելու պարտավորությունը ծագում է վարչական մարմնի կողմից իրականացված վարչարարության՝ ոչ իրավաչափ ճանաչվելու հետևանքով, որն էլ ենթադրում է իրավիճակի նախկին դրության վերականգնում: Ըստ այդմ՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության մոտ «ենթադրաբար» ծագում է գործարքով ստացված գումարը գնորդին վերադարձնելու պարտավորություն, որը ենթադրում է վարչական մարմնի կողմից՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացում, ինչն ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

20. Այսպիսով՝ սույն գործով Հասմիկ Շահբազյանի և ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև ծագած վեճը վերաբերում է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 2014 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված թիվ 1848 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ստացած 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը Հասմիկ Շահբազյանին վերադարձնելուն, այսինքն՝ վարչական մարմնին որոշակի գործողություն կատարելուն պարտավորեցնելուն, որպիսի իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

Վերոգրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով, որ սույն գործով Հասմիկ Շահբազյանի և ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև ծագած իրավական վեճը բխում է հանրային իրավահարաբերությունից, թիվ ՎԴ/13026/05/21 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/13026/05/21 գործն ըստ հայցի Հասմիկ Շահբազյանի ընդդեմ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ 2014 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված թիվ 1848 անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով ստացած 5.000.000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը Հասմիկ Շահբազյանին վերադարձնելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ